Հաշվետվություն

2025 թվականի մայիսի 12-ից 16-ը Բուլղարիայի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը**
   Վահան Պոտոսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքային /կապիտալ/ ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչության կոշտ կենցաղային թափոնների կառավարման բաժնի գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Բուլղարիայի Հանրապետություն (ք. Սոֆիա), 2025թ. մայիսի 12-ից 16-ը:

4. **Հրավիրող կողմը**
   Համաշխարհային Բանկ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**
   Մասնակցել «Technical Deep Dive - Solid Waste Management for Middle Income Countries» խորագրով դասընթացին

6. **Քննարկված թեմաները**
   Աշխատաժողովների ընթացքում քննարկվել են թափոնների կառավարման մարտահրավերները համաշխարհային մակարդակում, ներկայացվել է Ճապոնիայի փորձը թափոնների կառավարման և շրջանաձև տնտեսության ներդրման բնագավառում, ինչպես նաև Բուլղարիայի թափոնների կառավարման համակարգի զարգացումը վերջին տասնամյակների ընթացքում, մասնավորապես՝ Սոֆիա համայնքում իրականացված աշխատանքները: Անդրադարձ է կատարվել կենցաղային թափոնների կառավարման մի շարք եղանակների առանձնահատկություններին՝ մեխանիկական-կենսաբանական մաքրում, աղբից էներգիայի ստացում, սանիտարական աղբավայրերում տեղադրում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**
   Աշխատաժողովների ընթացքում ներկայացրել եմ թափոնների կառավարման ներկայիս պատկերը Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչպես նաև նախատեսվող քայլերը կոշտ թափոնների կառավարման ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ: Մասնակից երկրների ներկայացուցիչների համար կազմակերպվել են դաշտային այցելություններ և հանդիպումներ թափոնների մեխանիկական-կենսաբանական մաքրման, օրգանական թափոնների կոմպոստացման և անաէրոբ քայքայման կայանների, պլաստիկի և թղթի

վերամշակման համալիրների և սանիտարական աղբավայրի շահագործման պատասխանատու անձանց հետ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Աշխատաժողովների, հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հնարավորության պարագայում իրականացնել փորձի փոխանակում: Ընդունված որոշումներ և ստորագրված փաստաթղթեր չկան:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Առաջարկվել է վերը նշված պայմանավորվածությունների իրականացման, անհրաժեշտության դեպքում բուլղարական և մասնակից այլ երկրների լավագույն փորձի տեղայնացման նպատակով աշխատանքներ տանելու ուղղությամբ:

Ստորագրություն, ամսաթիվ

21.05.2025թ.